ՇՈՒՇԱՆԻԿ ՁՈՒՐԱԲՅԱՆ

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ ՆԿԱՐԱԶԱՐԴԱԾ ԳՐՔԻ ԳՐԱՖԻԿԱՅԻ ԱՆՀԱՅՏ ԷՋԵՐԸ

Վարդգես Սուրենյանցը հայ կերպարվեստ մուտք գործեց այն պահին, երբ չկար գրքի նկարազարդման մշակույթ:[1] Նկարչի պահպանված ծեռագրերում հանդիպում ենք բազմաթիվ նմուշների, որոնցից պարզ է դառնում, թե նա որքան խոշոր տեղ է հատկացրել գրքի նկարազարդման արվեստին, ինչպես լուրջ է ուսումնասիրել յուրաքանչյուր ստեղծագործությունում ամեն մի տողը:

Վերջերս մեզ հնարավորություն ընծեռնվեց մասնավոր հավաքածուում ծանոթանալ նկարչի գրքի նորահայտ նկարազարդումներին, որոնք առնչվում են հայ ականավոր բանաստեղծ ու գրող Հովհաննես Թումանյանի «Թմբկաբերդի առումը» էպիկական ասքին (պոեմը գրվել է 1902 թ., իսկ հրատարակվել 1905 թ.): Ինչպես տեղեկացանք, Թումանյանը ժամանակին՝ 1915 – 1916 թթ., Սուրենյանցի նկարազարդած պոեմի այս էջերը վաճառել է հայ գաղթականներին օգնելու նպատակով, իսկ հետագայում դրանք հայտնվել են ոմն Հմայակ Սորյանի մոտ, որը նույն թվականներին Թիֆլիսում է ապրել:

Սուրենյանցին նվիրված մենագրությունների և հոդվածների մեջ այս պոեմը նկարզարդելու մասին որևէ տեղեկության չենք հանդիպում, և այս առումով այս երկու պատկերազարդ էջերն առավել արժեքավոր և նշանակալից են դառնում արվեստի պատմության ուսումնասիրման տեսանկյունից: Հավելենք, որ փոխարենը մենք ունենք որոշակի ստույգ տեղեկություններ, որոնք լույս են սփռում մեզ հետաքրքրող խնդրի վրա: Այսպես, հայտնի է, որ 1906 թ. Սուրենյանցը նախաձեռնել էր հայկական հեքիաթների, այդ թվում նաև Հովհաննես Թումանյանի «Մոխրոտի» և «Գառնիկ Ախպերի» նկարազարդումը[2]: Այդ ձեռավորումների մեջ հասած առանձին էջերը լրիվ պատկերացում են տալիս ժողովրդական ստեղծագործության նկատմամբ նկարչի ունեցած մոտեցման մասին:

---

[1] Ինչպես նշում է արվեստաբան Ռուբեն Դրամբյանը. «Նա գրեթե միակն էր XIX -րդ դարի և XX–րդ դարի սկզբի հայ արվեստում գրքի նկարազարդման գրաֆիկայի բնագավառում»: (Дрампян Р., Вардгес Суренянц (к 30 – летию со дня смерти), "Коммунист ", 1951, 6 апреля, N 80 (5097) с. 4)

[2] Հայկական ժողովրդական հեքիաթների առաջին էջերը Սուրենյանցը ցուցադրում է 1906 թ. Պետերբուրգում, Լեոնարդո դա Վինչիի անվան միության ջրաներկերի երկրորդ ցուցահանդեսում: (Ղազարյան Մ., Վարդգես Սուրենյանց, Ե., 1960, էջ 47)

Մենք գիտենք նաև, որ 1900 - ական թթ. Սուրենյանցը կապեր էր հաստատել ու մտերմացել Ալ. Ծատուրյանի, Ալ. Սպենդիարյանի և Հովի. Թումանյանի[3] հետ, մի բան, որը նպաստել է նրա ստեղծագործական ըմբռնումների և մտահղացումների հարստացմանը: Ուշագրավ է, որ 1916թ.[4] «Հայ արվեստագետների միության» ընդհանուր ժողովի բացման առիթով և շնորհավորման ճառեր արտասանողների մեջ Հովի. Թումանյանից և Ալ. Շիրվանզադեից բացի ելույթ է ունեցել նաև Սուրենյանցը:[5] Մտերիմ հարաբերություններ ունենալով Ալ. Սպենդիարյանի հետ՝ նկարիչը դեռ 1907–1908 թթ., կոմպոզիտորին հուշել է Հովի. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի հիման վրա օպերա ստեղծելու գաղափարը:[6] Ավելին՝ կոմպոզիտորին ոգևորելու նպատակով նկարիչը «դեռ չգրված այդ երաժշտական ստեղծագործության համար բեմական դեկորների և տարազների էսքիզներ է վրձնել»:[7]

Մեր սույն հոդվածի ուսումնասիրության առարկան հանդիսացող Վ. Սուրենյանցի նկարազարդած նորահայտ երկու էջերը (20X26 և 18X24) կրում են նկարչի ստորագրությունը, և միայն նրանցից մեկն ունի ստեղծման տարեթիվ՝ 1906 թվական: Այս հիշատակությունը մեզ օգնում է, թերևս, պարզել նաև նկարազարդ մյուս թերթի նույն թվականին ստեղծված լինելը: Պոեմի նկարազարդ էջերի մեջ առկա են ոչ միայն առանձին իրերի, կերպարների նրբագույն զգացողություն, միջավայրի ու պատմական գունազգացողության հարազատություն, այլև գրքի ձևավորման մշակույթի բարձր մակարդակ: Այս էջերը յուրահատուկ մի գրավչություն ունեն. արտահայտում են Սուրենյանցի արվես-

---

[3] Սանյա Ղազարյանի՝ Սուրենյանցին նվիրված մենագրության մեջ զետեղված նկարչի ստեղծագործությունների ընդհանուր ցանկում հիշատակվում է «Հովհաննես Թումանյանի դիմանկարը» վերտառությամբ նկարը, որը գրքի հեղինակը թվագրել է 1912 թվականով, և մատնանշել, «գտնվելու վայրն անհայտ է» (Մ. Ղազարյան, Վարդգես Սուրենյանց, Ե., 1960, էջ 91)

[4] Վ. Սուրենյանցն իր գրական ժառանգությունը՝ թարգմանական և ինքնուրույն մի շարք գործեր 1916 թ. «հանձնել է Հովհաննես Թումանյանին՝ ցանկություն ունենալով հրատարակել դրանք Հայոց դրամատիկական ընկերության միջոցներով»: (Ղազարյան Մ., Նյութեր Վարդգես Սուրենյանցի կյանքից (նկարչի մահվան 30 - ամյակի առթիվ), Վ. Սուրենյանցի գրական ժառանգությունը, տետր N 1, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ):

[5] Ղազարյան Մ., Կյանքի վերջին տարիները, «Սովետական արվեստ», 1960, N 6, էջ 2:

[6] Սակայն Սպենդիարյանը օպերայի ստեղծմանն անմիջապես ձեռնամուխ չեղավ: Շուրջ մեկ տասնամյակ անց, 1916 թ. փետրվարի վերջին և մարտին Սպենդիարյանը, գտնվելով Թիֆլիսում, ծանոթանում է Հովի. Թումանյանի հետ: Բանաստեղծն օպերայի լիբրետոյի ստեղծման համար առաջարկում է իր երեք պոեմները՝ սկզբում՝ «Անուշը», ապա «Փարվանան» և «Թմբկաբերդի առումը»: Եվ, ահավասիք, Սպենդիարյանի ընտրությունը կանգ է առնում վերջինի վրա: Իսկ «Ավմաստ» օպերան լույս աշխարհ է գալիս միայն 1928 թ երբ նկարիչն արդեն հեռացել էր կյանքից:

[7] Աղասյան Ա., Վարդգես Սուրենյանց, Նշանավոր ճեմարանականները, Պրակ Բ., էջմիածին, 2009.էջ 414:

տի վառ ինքնատիպությունը: Պոեմը նկարչին հնարավորություն է տվել իր նախասիրություններն արտահայտել որոշակի գեղավեստական կերպարներով: Պարսկական կենցաղի ազգային ինքնատիպ պատկերը ցայտուն կերպով դրսևորված է Նադիր Շահին պատկերող նկարազարդ էջում, որտեղ շատ լավ է իմաստավորված պատկերի կառուցվածքը՝ խանի տիրական դիրքով, իսլամական նիստ ու կացին բնորոշ կահավորանքով, դրվագված սեղանիկով՝ ամբողջական տպավորություն ստեղծելով արևելյան տիրակալի կենցաղի մասին: Այս նկարազարդ էջի պատկերման մեջ երևան է եկել նկարչի նախորդ գործերից մեզ հայտնի օթոցին բազմած տիրակալների կերպարը: Դա վերաբերում է և պարսկական տպավորությունների ներքո ստեղծված «Շահի հանգիստը» նկարի շահի (շահերին պատկերող այս նկարների բնաբանը հանդիսանում է «Շահի հանգիստը» ստեղծագործությունը), և Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի նկարազարդումներից Գիրեյ խանին պատկերող թերթի, և ավելի ուշ ստեղծված Մահմուդ Ղազնևի շահին պատկերող կերպարներին «Ֆիրդուսին կարդում է իր «Շահ – Նամեն» Մահմուդ Ղազնևիին» ստեղծագործության մեջ: Փաստորեն Ա. Պուշկինի վերը նշված պոեմից հետո, «Թմբկաբերդի առումը» էպիկական ասքը հեղինակի նկարազարդած երկրորդ պոեմն է և որից երկու էջերն են մեզ առայժմ հայտնի: Նադիր Շահին պատկերող նկարազարդ էջի հմայքը նրա հորինվածքի կառուցվածքով և հմտությամբ.

Վ.Սուրենյանց. Հովհ. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմի նկարազարդումներից « Նադիր Շահ », 1906 թ.

Վ.Սուրենյանց. Շահի հանգիստը, 1887 թ.

Վ. Սուրենյանց. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի նկարազարդումներից. « Գիրեյ խան », 1897թ

Վ. Սուրենյանց. Ֆիրդուսին Շահ Մահմեդ Ղազնևիի մոտ

Վ. Սուրենյանց. Ֆիրդուսին կարդում է իր «Շահ – Նամեն» Մահմուդ Ղազնևիին», 1913 թ.

ճկուն կոր գծերով պատկերված կերպարների համադրության մեջ է: Նկարի կոմպոզիցիան իր անկյունագծային կառուցմամբ արձագանքում է նկարչի Գիրեյ խանին, Մահմուդ Ղազնևիին պատկերող նկարներին: Սուրենյանցը, այստեղ նույնպես մեծ նշանակություն տալով միջավայրին, իրեն հատուկ հնարամտությամբ և բծախնդիր պահանջկոտությամբ, օգտագործել է ձեռքի տակ ունեցած նյութերը՝ կիրառական առարկաները, տարազը (որոնց բազմաթիվ պատկերումներին հանդիպում ենք նրա արևելյան ստեղծագործություններում) և վրձնել իրական պատմա-ազգագրական մանրամասներով հարուստ հորին-

վածք: Ի տարբերություն մյուս խաների պատկերների, այստեղ լիակատար դրսևորում չի գտել Սուրենյանցի շեշտված հակումը դեպի իրերի առարկայական մանրամասնությունները, զարդանախշը: Դա առավել արդարացված է նկարազարդ մյուս էջի համար, որտեղ դրամատիկ գործողություն է ծավալվում, և այդ դեպքում օրնամենտը կխանգարի գործողության ամբողջական ընկալմանը: Ի տարբերություն գրաֆիկական եղանակով արված նկարչի բազմաթիվ նկարազարդումների, Թումանյանի « Թմբկաբերդի առումը » պոեմի այս երկու պատկերազարդ էջերը կատարված են ոչ թե գրաֆիկական, այլ գեղանկարչական միջոցներով՝ այդպիսով աղերսվելով նկարչի վրձնած «Գառնիկ Ախպերը» հեքիաթին:

Պոեմը նկարազարդելիս Վ. Սուրենյանցը ելակետ է ընդունել նրա բովանդակությունն արտացոլող ամենաբնորոշ դրվագները՝ այս երկու պատկերների մեջ գեղարվեստական հուզիչ պատկերավորմամբ խտացնելով նրա գաղափարը: Գրական երկի դրամատիկականությունն է բացահայտված նկարչի վրձնած մյուս էջում, որտեղ, թերևս, ներկայացված է Ջավախքի դստերը պատժելու, «ժեռ քարից», « քարի ծերից » դեպի ծոր նետող տեսարանը:

Այստեղ պատկերված գինվորի կերպարին հանդիպում ենք նաև և «Ջաբել թագուհու վերադարձը գահին» (1909 թ.), և « Ֆիրդուսին կարդում է իր «Շահ – Նամեն» Մահմուդ Ղազնևիին » (1913 թ.) կտավներում: Իսկ ինչ վերաբերում է Թմկա տիրուհուն, ապա նրա հոգեվիճակը, ասես, արձագանքում է Սուրենյանցի վրձնած «Բախչիսարայի շատրվանը» նկարազարդումներից «Թաթարների ներխուժումը » պատկերող էջի Մարիի կերպարին:

Վ. Սուրենյանց, Հովի. Թումանյանի «Թմբկաբերդի առումը » պոեմի

Վ. Սուրենյանց, Թաթարների ներխուժումը, 1898 թ. («Բախչիսարայի շատրվանը» նկարազարդումներից)

Նկարազարդ այս էջում Սուրենյանցը հնարամտորեն է օգտագործել հողագույն թուղթը որպես հիմնական ֆոն և մեղմ երանգների օգնությամբ ստեղծել է իրողությանը համապատասխան համոզիչ պատկեր: Այս սկզբունքով է նկարիչն առաջնորդվել նաև Հովի. Թումանյանի վերը նշված հեքիաթը նկարազարդելիս: Հորինվածքի կառուցման ժամանակ նկարիչը թեմային տվել է դրամատիկական լուծում և հոգեբանական խտացման միջոցով հասել ստեղծագործության արտահայտչականության:

Խորն ուսումնասիրելով գրական երկի բովանդակությունը, շեշտելով և ճշմարտացիորեն արտահայտելով նրա կարևոր, ազգային ու պատմական յուրահատուկ կողմերը, նկարիչը հարազատ է մնացել պոեմի ոգուն, բովանդակությանը՝ բացահայտելով հերոսների բազմազան հոգեկան ապրումները:

Իրական, ճշմարտացի, կենդանի և հուզիչ պատկերների վերածված այս նկարազարդ էջերն իրենց զուսպ գեղանկարչական միջոցներով ու արտահայտիչ ճաշակով, կոմպոզիցիայի ու գունազգացողության ինքնատիպ լուծումով բացառիկ հմայք ունեն և խոշոր ավանդ են մեր գրքի գրաֆիկայում: